

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության
Կատարումների և հնչյունագրերի

Պայմանագիր

/1996 թ./

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պայմանավորվող կողմերը,

ցանկանալով հնարավորին չափ արդյունավետ և միասնական զարգացնել և պահպանել կատարողների և հնչյունագիր արտադրողների իրավունքների պաշտպանությունը,

ճանաչելով նոր միջազգային կանոնների կիրառման անհրաժեշտությունը՝ տնտեսական, սոցիալական, մշակութային և տեխնոլոգիական զարգացումների հետ կապված հարցերին բավարար լուծում տալու համար,

ճանաչելով տեղեկատվության և կապի տեխնոլոգիաների զարգացման և համապատասխանեցման մեծ ազդեցությունը կատարումների և հնչյունագրերի արտադրության և օգտագործման վրա,

ճանաչելով կատարողների և հնչյունագիր արտադրողների իրավունքների և հասարակության շահերի միջև հավասարակշռության պահպանման անհրաժեշտությունը հատկապես կրթության, հետազոտությունների և տեղեկատվության հասանելիության բնագավառներում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Գ Լ ՈՒ Խ Ի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Առնչությունը այլ Կոնվենցիաների հետ

1) Սույն Պայմանագիրը որևէ կերպ չի ազդում գոյություն ունեցող այն պարտավորությունների վրա, որոնք Պայմանավորվող կողմերն ունեն միմյանց նկատմամբ 1961թ. հոկտեմբերի 26-ին Հռոմում կնքված՝ Կատարողների, հնչյունագիր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների պահպանության մասին միջազգային Կոնվենցիայով:

2) Սույն Պայմանագրով տրամադրված պահպանությունը չի վերաբերում գրական և գեղարվեստական ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքի պաշտպանությունը և չի ազդում վերջինիս վրա: Հետևաբար սույն Պայմանագրի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես նման պաշտպանությանը վնաս հասցնող:

3) Սույն Պայմանագիրը որևէ կապ չպետք է ունենա ցանկացած այլ պայմանագրով նախատեսված իրավունքների և պարտավորությունների հետ և ոչ էլ վնաս հասցնի դրանց:

Հոդված 2 Սահմանումներ

Սույն Պայմանագրի նպատակով՝

ա) *Կատարողներ* նշանակում է՝ դերասաններ, երգիչներ, երաժիշտներ, պարողներ և այլ անձինք, ովքեր կատարում, երգում, արտասանում, կարդում, նվագում, մեկնաբանում կամ այլ կերպ կատարում են գրական կամ գեղարվեստական ստեղծագործություններ կամ ազգային բանահյուսության արտահայտություններ:

բ) *Հնչյունագիր* նշանակում է՝ կատարման հնչյունների կամ այլ հնչյունների ամրագրումը կամ հնչյունների այլ ձևով ներկայացման ամրագրումը՝ բացի հնչյունների ամրագրման այն ձևից, որն ընդգրկված է կինեմատոգրաֆիկ կամ այլ տեսալսողական ստեղծագործությունում:

գ) *Ամրագրում* նշանակում է՝ հնչյունների մարմնավորումը կամ դրանք ներկայացնելը, որը թույլ է տալիս դրանց ընկալումը, վերարտադրումը կամ հաղորդումը սարքի միջոցով:

դ) *Հնչյունագիր արտադրող*՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ իրականացվել է կատարման հնչյունների կամ այլ հնչյունների կամ հնչյունների ներկայացման առաջին ամրագրումը:

ե) *Ամրագրված կատարման կամ հնչյունագրի լույսընծայում* նշանակում է՝ իրավատիրոջ համաձայնությամբ ամրագրված կատարման կամ հնչյունագրի կրկնօրինակները հասարակությանը ողջամիտ քանակությամբ առաջարկելը:

զ) *Հեռարձակում* նշանակում է՝ հնչյունների կամ պատկերների և հնչյունների կամ դրանց ներկայացման տարածումը հասարակությանը՝ առանց հաղորդալարի. այսպիսի տարածումը արբանյակային կապով նույնպես «հեռարձակում» է. «հեռարձակում» է համարվում նաև կողմնորված ազդանշանների տարածումը, եթե դրանց ապակողմնորման միջոցները հասարակությանը տրամադրվել են հեռարձակող կազմակերպության կողմից կամ նրա համաձայնությամբ:

է) Կատարման կամ հնչյունագրի *«հրապարակային հաղորդում»* նշանակում է՝ հնչյունագրում ամրագրված կատարման հնչյունների կամ ուղղակի հնչյունների կամ հնչյունների ներկայացման հաղորդումը հասարակությանը ցանկացած եղանակով՝ բացի եթերային հեռարձակումից: 15-րդ հոդվածի նպատակով հրապարակային հաղորդումը ընդգրկում է հնչյունագրում ամրագրված հնչյունների կամ հնչյունների ներկայացումը հասարակությանն ունկնդրելի դարձնելը:

Հոդված 3

Սույն Պայմանագրով պաշտպանվող անձինք

1) Պայմանավորվող կողմերը սույն Պայմանագրով նախատեսված պահպանությունը տրամադրում են այն կատարողներին և հնչյունագիր արտադրողներին, որոնք այլ Պայմանավորվող կողմերի քաղաքացիներ են:

2) Այլ Պայմանավորվող կողմերի քաղաքացիներ ասելով պետք է հասկանալ այն կատարողներին եւ հնչյունագիր արտադրողներին, ովքեր համապատասխանում են Հռոմի Կոնվենցիայով նախատեսված պահպանությունից օգտվելու համար անհրաժեշտ չափանիշներին, այնպես, եթե սույն Պայմանագրի բոլոր Պայմանավորվող կողմերը լինեն այդ Կոնվենցիայի Պայմանավորվող պետություններ: Նշված չափանիշների վերաբերյալ Պայմանավորվող կողմերը կիրառում են սույն Պայմանագրի 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումները:

3) Ցանկացած Պայմանավորվող կողմ, որն օգտվում է Հռոմի Կոնվենցիայի 5 (3) հոդվածով կամ սույն կոնվենցիայի 5-րդ հոդվածի նպատակներով, այդ Կոնվենցիայի 17-րդ հոդվածով նախատեսված հնարավորություններից, այդ դրույթներով նախատեսված ծանուցում է կատարում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) Գլխավոր տնօրենին:

Հոդված 4 Ազգային ռեժիմ

1) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմերի քաղաքացիներին, ինչպես սահմանված է 3-րդ հոդվածի 2-րդ կետում, ցուցաբերում է այնպիսի մոտեցում, որը սույն Պայմանագրով կոնկրետ նախատեսված բացառիկ իրավունքների եւ սույն Պայմանագրի 15-րդ հոդվածով նախատեսված արդարացի վարձատրության իրավունքի կապակցությամբ ցուցաբերում է իր իսկ քաղաքացիներին:

2) 1-ին կետով սահմանված պարտավորությունը չի կիրառվում այն ծավալով, ինչ ծավալով մյուս Պայմանավորվող կողմը օգտագործում է սույն Պայմանագրի 15(3) հոդվածով թույլատրված վերապահումները:

ԳԼՈՒԽ II ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 5 Կատարողների ոչ գույքային իրավունքները

1) Կատարողը իր չամրագրված կենդանի բանավոր կատարումների կամ հնչյունագրերում ամրագրված կատարումների նկատմամբ իրավասու է պահանջել ճանաչվել որպես կատարող՝ անկախ իր գույքային իրավունքներից և նույնիսկ այդ իրավունքների փոխանցման դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ իրավունքի սահմանափակումը պայմանավորված է կատարումի օգտագործման բնույթով, և իրավունք ունի առարկելու իր կատարման ցանկացած խեղաթյուրման, աղճատման կամ այլ ձևափոխման, ինչպես նաև իր անվանը վնասող գործողությունների դեմ:

2) Իրավունքները, որոնք կատարողին տրամադրված են 1-ին կետի համաձայն, պահպանվում են նրա մահից հետո՝ առնվազն մինչև գույքային իրավունքների դադարման ժամկետը, և իրականացվում են այն անձանց կամ հաստատությունների կողմից, որոնք լիազորված են պահպանություն պահանջող Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ: Այնուամենայնիվ, այն Պայմանավորվող կողմերը, որոնց օրենսդրությունը վավերացման կամ սույն Պայմանագրին միանալու պահին չի նախատեսում կատարողի մահից հետո նախորդ կետում թվարկված նրա բոլոր իրավունքների պաշտպանությունն ապահովող դրույթներ, կարող են սահմանել, որ այդ իրավունքների մի մասը դադարում է գործել նրա մահից հետո:

3) Իրավունքների պաշտպանության ապահովման միջոցները նախատեսվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որտեղ պահանջվում է պաշտպանությունը:

Հոդված 6

Կատարողների գույքային իրավունքները իրենց չամրագրված կատարումների նկատմամբ

Կատարողները օգտվում են բացառիկ իրավունքից՝ իրենց կատարումների նկատմամբ թույլատրելու.

i) իրենց չամրագրված կատարումների եթերային հեռարձակումն ու հրապարակային հաղորդումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կատարումը արդեն հեռարձակված է, և

ii) իրենց չամրագրված կատարումների ամրագրումը:

Հոդված 7

Վերարտադրության իրավունք

Կատարողները օգտվում են բացառիկ իրավունքից՝ թույլատրելու հնչյունագրերում ամրագրված իրենց կատարումների ուղղակի կամ անուղղակի վերարտադրությունը ցանկացած եղանակով և ձևով:

Հոդված 8

Տարածման իրավունք

1) Կատարողներն օգտվում են բացառիկ իրավունքից՝ թույլատրելու հնչյունագրերում ամրագրված կատարումների բնօրինակը կամ կրկնօրինակները հասարակությանը մատչելի դարձնել վաճառքի կամ սեփականության իրավունքի այլ փոխանցման միջոցով:

2) Սույն Պայմանագրով ոչինչ չի ազդում Պայմանավորվող կողմերի անկախության վրա՝ սահմանելու այն պայմանները, որոնց համաձայն՝ 1-ին կետում նշված իրավունքի դադարեցումը կիրառվում է ամրագրված կատարման առաջին վաճառքից կամ կատարողի թույլտվությամբ ամրագրված կատարման բնօրինակի կամ կրկնօրինակի սեփականության իրավունքի այլ փոխանցումից հետո:

Հոդված 9

Վարձույթով տալու իրավունք

1) Կատարողներն օգտվում են բացառիկ իրավունքից՝ թույլատրելու հնչյունագրերում ամրագրված իրենց կատարումների բնօրինակն ու կրկնօրինակները Պայմանավորվող կողմերի ազգային օրենքով սահմանված կարգով առևտրային նպատակով հանրությանը վարձույթով տալը՝ նույնիսկ կատարողի կողմից կամ նրա թույլտվությամբ դրանց տարածումից հետո:

2) Չնայած 1-ին կետի դրույթներին՝ այն Պայմանավորվող կողմը, որը 1994 թ. ապրիլի 15-ի դրությամբ ունի և շարունակում է ունենալ հնչյունագրերում ամրագրված կատարումների կրկնօրինակները վարձույթով տալու համար կատարողների արդարացի վարձատրության համակարգ, կարող է պահպանել այդ համակարգը, պայմանով, որ

հնչյունագրերի առևտրային վարձույթը նյութական վնաս չի պատճառում կատարողների վերարտադրության բացառիկ իրավունքին:

Հոդված 10

Ամրագրված կատարումները հանրությանը մատչելի դարձնելու իրավունք

Կատարողները օգտվում են բացառիկ իրավունքից՝ թույլատրելու հնչյունագրերում ամրագրված իրենց կատարումները հանրությանը մատչելի դարձնել հաղորդալարով կամ առանց հաղորդալարի, այնպիսի եղանակով, որ հասարակության ներկայացուցիչներին դրանք հասանելի լինեն անհատապես ընտրած ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ:

ԳԼՈՒԽ III

ՀԱՅՅՈՒՆԱԳՐԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 11

Վերարտադրության իրավունք

Հնչյունագրեր արտադրողներն օգտվում են բացառիկ իրավունքից՝ թույլատրելու իրենց հնչյունագրերի ուղղակի կամ անուղղակի վերարտադրությունը ցանկացած եղանակներով կամ ձևերով:

Հոդված 12

Տարածման իրավունք

1) Հնչյունագրեր արտադրողներն օգտվում են բացառիկ իրավունքից՝ թույլատրելու իրենց հնչյունագրերի բնօրինակը կամ կրկնօրինակները հասարակությանը մատչելի դարձնել վաճառքի կամ սեփականության իրավունքի փոխանցման այլ միջոցով:

2) Սույն Պայմանագրով ոչինչ չի ազդում Պայմանավորվող կողմերի անկախության վրա՝ սահմանելու այն պայմանները, որոնց համաձայն՝ 1-ին կետում նշված իրավունքի դադարեցումը կիրառվում է ամրագրված կատարման առաջին վաճառքից կամ կատարողի թույլտվությամբ հնչյունագրի բնօրինակի կամ կրկնօրինակի սեփականության իրավունքի այլ փոխանցումից հետո:

Հոդված 13

Վարձույթով տալու իրավունք

1) Հնչյունագրեր արտադրողներն օգտվում են բացառիկ իրավունքից՝ թույլատրելու իրենց հնչյունագրերի բնօրինակը եւ կրկնօրինակներն առևտրային նպատակներով հանրությանը վարձույթով տալը՝ նույնիսկ արտադրողի կողմից կամ նրա թույլտվությամբ դրանց տարածումից հետո:

2) Չնայած 1-ին կետի դրույթներին՝ այն Պայմանավորվող կողմը, որը 1994 թ. ապրիլի 15-ի դրությամբ ունի և շարունակում է ունենալ իրենց հնչյունագրերի կրկնօրինակները վարձույթով տալու համար արտադրողների արդարացի վարձատրության համակարգ, կարող է պահպանել այդ համակարգը պայմանով, որ հնչյունագրերի առևտրային վարձույթը նյութական վնաս չի պատճառում հնչյունագրեր արտադրողների վերարտադրության բացառիկ իրավունքին:

Հոդված 14
Հնչյունագրերը հանրությանը մատչելի դարձնելու իրավունք

Հնչյունագիր արտադրողները օգտվում են բացառիկ իրավունքից՝ թույլատրելու իրենց հնչյունագրերը հանրությանը մատչելի դարձնել հաղորդալարով կամ առանց հաղորդալարի, այնպիսի եղանակով, որ հասարակության անդամներին դրանք հասանելի լինեն անհատապես ընտրած ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ:

ԳԼՈՒԽ IV
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 15
Եթերային հեռարձակման և հրապարակային հաղորդման համար վարձատրություն ստանալու իրավունք

1) Կատարողներն ու հնչյունագիր արտադրողները օգտվում են միանվագ արդարացի վարձատրություն ստանալու իրավունքից՝ հնչյունագրերի ուղղակի կամ անուղղակի օգտագործման համար, առևտրային նպատակով հրապարակված եթերային հեռարձակման կամ ցանկացած հրապարակային հաղորդման համար:

2) Պայմանավորվող կողմերը կարող են իրենց ազգային օրենսդրությամբ սահմանել, որ միանվագ արդարացի վարձատրություն կպահանջվի օգտագործողից՝ հօգուտ կատարողին կամ հնչյունագիր արտադրողին կամ երկուսին միասին: Պայմանավորվող կողմերը իրենց ազգային օրենսդրությամբ կարող են սահմանել, որ կատարողի և հնչյունագիր արտադրողի միջև անհամաձայնության դեպքում նախատեսվեն պայմաններ, որոնց համաձայն կատարողների ու հնչյունագիր արտադրողի միջև կբաշխվի միանվագ արդարացի վարձատրությունը:

3) Ցանկացած Պայմանավորվող կողմ ՄՍՀԿ Գլխավոր տնօրենին ի պահ տված հայտարարագրով կարող է հայտարարել, որ կկիրառի 1-ին կետի դրույթները միայն օգտագործման որոշ տեսակների դեպքում կամ կսահմանափակի դրանց կիրառումը մեկ այլ ճանապարհով կամ ընդհանրապես չի կիրառի այս դրույթները:

4) Սույն հոդվածի նպատակով հնչյունագրերը, որոնք հանրությանը մատչելի են դարձել հաղորդալարով կամ առանց հաղորդալարի, այնպիսի եղանակով, որ հասարակության անդամներին դրանք հասանելի են անհատապես ընտրած ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ, դիտվում են իբրև դրանք առևտրային նպատակով լույս ընծայված հնչյունագրեր:

Հոդված 16
Սահմանափակումներ և բացառություններ

1) Պայմանավորվող կողմերը կարող են կատարողների և հնչյունագրեր արտադրողների պաշտպանության վերաբերյալ իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսել այնպիսի սահմանափակումներ կամ բացառություններ, ինչպիսիք նրանք իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսում են գրական և գեղարվեստական ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքի պահպանության վերաբերյալ:

2) Պայմանավորվող կողմերը սույն Պայմանագրով նախատեսված իրավունքների ցանկացած սահմանափակում կամ բացառություն սահմանափակում են որոշ հատուկ դեպքերով, որոնք չեն խոչընդոտում կատարմանը կամ հնչյունագրի բնականոն օգտագործմանը և անհիմն կերպով չեն վնասում կատարողի կամ հնչյունագիր արտադրողի օրինական շահերը:

Հոդված 17 **Պահպանության ժամկետը**

1) Սույն Պայմանագրով կատարողներին տրամադրվող պահպանության ժամկետը պետք է տևի առնվազն մինչև 50 տարվա ժամանակահատվածի վերջը՝ հաշվարկված այն տարվա վերջից, երբ կատարումը ամրագրվել է հնչյունագրի վրա:

2) Սույն Պայմանագրով հնչյունագիր արտադրողներին տրամադրվող պաշտպանության ժամկետը պետք է տևի առնվազն մինչև 50 տարվա ժամանակահատվածի վերջը՝ հաշվարկված այն տարվա վերջից, երբ հրապարակվում է հնչյունագիրը, կամ, հնչյունագրի ամրագրումից 50 տարվա ընթացքում նման հրապարակման բացակայության դեպքում, 50 տարի՝ հաշված այն տարվա վերջից, երբ կատարվել է ամրագրումը:

Հոդված 18 **Պարտավորություններ տեխնոլոգիական միջոցառումների վերաբերյալ**

Պայմանավորվող կողմերն ապահովում են պատշաճ իրավական պահպանություն և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ ընդդեմ այն արդյունավետ տեխնոլոգիական միջոցների շրջանցումների, որոնք կատարողները կամ հնչյունագիր արտադրողներն օգտագործում են սույն Պայմանագրի հիման վրա իրենց իրավունքների իրականացման կապակցությամբ, և որոնք սահմանափակում են կատարողների կամ հնչյունագրեր արտադրողների կողմից կամ օրենքով չթույլատրված գործողություններն իրենց կատարումների կամ հնչյունագրերի նկատմամբ:

Հոդված 19 **Իրավունքների կառավարման մասին տեղեկատվությանը վերաբերող պարտավորությունները**

1) Պայմանավորվող կողմերը ապահովում են պատշաճ և արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ ընդդեմ ցանկացած անձի, ով գիտակցաբար կատարում է հետևյալ գործողություններից որևէ մեկը՝ իմանալով կամ, քաղաքացիական իրավական պաշտպանության միջոցների առումով, բավարար հիմքեր ունենալով իմանալու, որ այդպիսի գործողությունը կխթանի, կնպաստի, կօգնի կամ կթաքցնի սույն Պայմանագրով սահմանված որևէ իրավունքի խախտում:

- (i) առանց թույլտվության հեռացնել կամ փոփոխել իրավունքների կառավարման վերաբերյալ որևէ էլեկտրոնային տեղեկատվություն,
- (ii) առանց թույլտվության տարածել, տարածման նպատակով ներմուծել, եթերով հեռարձակել, հրապարակայնորեն հաղորդել կատարումները կամ նրանց կրկնօրինակները՝ իմանալով, որ իրավունքների կառավարման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվությունը հեռացվել կամ փոփոխվել է առանց թույլտվության:

2) Սույն հոդվածի իմաստով «իրավունքների կառավարման մասին տեղեկատվություն» նշանակում է՝ տեղեկատվություն, որը նույնականացնում է կատարողին, կատարողի կատարումը, հնչյունագիր արտադրողին, կատարման կամ հնչյունագրի նկատմամբ որևէ իրավունքի իրավատիրոջ կամ կատարման կամ հնչյունագրի օգտագործման ժամկետների և պայմանների վերաբերյալ տեղեկատվություն և ցանկացած համար կամ կոդ, որում պարունակվում է այդպիսի տեղեկատվություն, երբ այդ տեղեկատվության տարրերից ցանկացածը կցված է ամրագրված կատարման կրկնօրինակին կամ ի հայտ է եկել ամրագրված կատարումը կամ հնչյունագիրը հաղորդելու կամ հանրությանը մատչելի դարձնելու կապակցությամբ:

Հոդված 20 Ընթացակարգեր

Սույն Պայմանագրով նախատեսված իրավունքներից օգտվելը եւ դրանց իրականացումը ենթակա չէ որեւէ ձեւականության:

Հոդված 21 Վերապահումներ

Հաշվի առնելով 15-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները՝ սույն Պայմանագրով որևէ վերապահում չի թույլատրվում:

Հոդված 22 Կիրառումը ժամանակի առումով

1) Պայմանավորվող կողմերը սույն Պայմանագրով սահմանված կատարողների և հնչյունագիր արտադրողների իրավունքների նկատմամբ կիրառում են Բեռնի Կոնվենցիայի 18-րդ հոդվածի դրույթները՝ համապատասխան փոփոխություններով:

2) Անկախ 1-ին կետի դրույթներից՝ Պայմանավորվող կողմը կարող է սահմանափակել սույն Պայմանագրի 5-րդ հոդվածի կիրառումն այն կատարումների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել սույն Պայմանագիրը տվյալ Կողմի համար ուժի մեջ մտնելուց հետո:

Հոդված 23 Դրույթներ իրավունքների իրականացման վերաբերյալ

1) Պայմանավորվող կողմերը պարտավորվում են, համաձայն իրենց օրենսդրության, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու սույն Պայմանագրի կիրառումը:

2) Պայմանավորվող կողմերը երաշխավորում են, որ իրենց օրենքով նախատեսվում են այնպիսի միջոցառումներ, որոնք թույլ կտան կատարել արդյունավետ գործողություններ սույն Պայմանագրով տրվող իրավունքների որևէ խախտման դեմ, ներառյալ անհապաղ միջոցառումները՝ կանխելու խախտումները, և միջոցառումներ, որոնք կբացառեն հետագա խախտումները:

ԳԼՈՒԽ 5 ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ Հոդված 24 Ասամբլեա

1) ա) Պայմանավորվող կողմերն ունեն Ասամբլեա:

բ) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ներկայացվում է մեկ պատվիրակով, որը կարող է ունենալ տեղակալներ, խորհրդատուներ ու փորձագետներ:

գ) Յուրաքանչյուր պատվիրակության ծախսերը հոգում է այն նշանակող Պայմանավորվող կողմը: Ասամբլեան կարող է դիմել ՄՄՀԿ-ին ֆինանսական օժանդակության խնդրանքով՝ օժանդակելու համար այն Պայմանավորվող կողմերի պատվիրակների մասնակցությանը, որոնք, ՄՄՀԿ-ի Ասամբլեայի պրակտիկայի համաձայն, համարվում են զարգացող երկրներ, կամ որոնք գտնվում են շուկայական տնտեսության անցումային փուլում:

2) ա) Ասամբլեան քննարկում է այն հարցերը, որոնք առնչվում են սույն Պայմանագրի պահպանմանը, զարգացմանը, կիրառմանն ու աշխատանքին:

բ) Ասամբլեան կատարում է իր վրա 26-րդ հոդվածի 2-րդ կետով դրված գործառույթը՝ սույն Պայմանագրին որոշ միջկառավարական կազմակերպությունների մասնակցությանը նպաստելու առնչությամբ:

գ) Ասամբլեան որոշում է սույն Պայմանագրի վերանայման նպատակով դիվանագիտական համաժողով գումարել և անհրաժեշտ հանձնարարականներ է տալիս ՄՄՀԿ Գլխավոր տնօրենին՝ նման դիվանագիտական համաժողով նախապատրաստելու համար:

3) ա) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որը Պետություն է, ունի մեկ ձայն և քվեարկում է միայն իր անունից:

բ) Ցանկացած Պայմանավորվող կողմ, որը հանդես է գալիս որպես միջկառավարական կազմակերպություն, կարող է մասնակցել քվեարկությանը իր Անդամ պետությունների փոխարեն՝ ձայների այն քանակությամբ, որը հավասար է այն Անդամ պետությունների ձայների քանակին, որոնք սույն Պայմանագրի Պայմանավորվող կողմերն են: Ոչ մի նման միջկառավարական կազմակերպություն չի կարող մասնակցել քվեարկությանը, եթե նրա Անդամ պետություններից մեկը օգտվում է քվեարկության իր իրավունքից և ընդհակառակը:

4) Ասամբլեայի հերթական նիստը գումարվում է յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ՝ ՄՄՀԿ Գլխավոր տնօրենի կողմից:

5) Ասամբլեան սահմանում է ընթացակարգի իր կանոնները, ներառյալ արտահերթ նիստերի գումարումը, քվորումի պահանջները և, ելնելով Պայմանագրի դրույթներից, տարբեր տեսակի որոշումների ընդունման համար պահանջվող մեծամասնությունը:

Հոդված 25 **Միջազգային բյուրո**

ՄՄՀԿ միջազգային բյուրոն իրականացնում է Պայմանագրին առնչվող վարչական գործառույթները:

Հոդված 26 **Պայմանագրին կողմ դառնալու իրավունք**

1) ՄՄՀԿ յուրաքանչյուր Անդամ պետություն կարող է դառնալ սույն Պայմանագրի կողմ:

2) Ասամբլեան կարող է որոշել՝ թույլատրել որեւէ միջկառավարական կազմակերպության դառնալու սույն Պայմանագրի կողմ, որը հայտարարում է, որ իրավասու է սույն Պայմանագրով կարգավորվող հարցերի կապացությամբ, ունի իր բոլոր Անդամ պետությունների համար պարտադիր իրավական կարգավորում, և իր ներքին

ընթացակարգերին համապատասխան, պատշաճ կարգով լիազորված է դառնալու սույն Պայմանագրի կողմ:

3) Եվրոպական համայնքը, սույն Պայմանագիրն ընդունած Դիվանագիտական համաժողովում հայտարարություն անելով վերը նշված կետի վերաբերյալ, կարող է դառնալ սույն Պայմանագրի կողմ:

Հոդված 27

Պայմանագրով տրամադրվող իրավունքներն ու պարտավորությունները

Եթե սույն Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է օգտվի բոլոր իրավունքներից և ստանձնի սույն Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները:

Հոդված 28

Պայմանագրի ստորագրումը

Սույն Պայմանագիրը բաց է ստորագրման ՄՍՀԿ ցանկացած Անդամ պետության և Եվրոպական համայնքի համար մինչև 1997թ. դեկտեմբերի 31-ը:

Հոդված 29

Պայմանագրի ուժի մեջ մտնելը

Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում 30 Պետությունների կողմից վավերացման կամ միանալու մասին փաստաթուղթը ՄՍՀԿ Գլխավոր տնօրենին ի պահ տրվելուց 3 ամիս հետո:

Հոդված 30

Պայմանագրի կողմի համար Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ժամկետը

Սույն Պայմանագիրը պարտադիր է .

- (i) 29-րդ հոդվածում նշված 30 պետությունների համար՝ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու թվականից:
- (ii) Յուրաքանչյուր այլ պետության համար՝ ՄՍՀԿ Գլխավոր տնօրենին իր վավերագիրը ի պահ տալու թվականից 3 ամիս հետո:
- (iii) Եվրոպական համայնքի համար՝ ՄՍՀԿ Գլխավոր տնօրենին վավերացման կամ միացման իր փաստաթուղթը ի պահ տալուց 3 ամիս հետո, եթե 29-րդ հոդվածի համաձայն՝ նման փաստաթուղթն ի պահ է տրվել սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, կամ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց երեք ամիս հետո, եթե փաստաթուղթն ի պահ է տրվել սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց առաջ:
- (iv) Ցանկացած այլ միջկառավարական կազմակերպության համար, որին թույլատրվել է դառնալ սույն Պայմանագրի կողմ՝ իր վավերագիրը ի պահ տալուց երեք ամիս հետո:

Հոդված 31

Պայմանագրի չեղյալ հայտարարումը

Ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է չեղյալ հայտարարել սույն Պայմանագիրը ՄՍՀԿ-ի Գլխավոր տնօրենին ուղղված ծանուցմամբ: Ցանկացած չեղյալ հայտարարում ուժի մեջ է մտնում ծանուցումը ՄՍՀԿ Գլխավոր տնօրենի ստանալու թվականից մեկ տարի հետո:

Հոդված 32
Պայմանագրի լեզուները

1) Սույն Պայմանագիրը ստորագրվում է մեկ բնօրինակով՝ անգլերեն, արաբերեն, չինարեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

2) Պաշտոնական տեքստը այլ լեզուներով, բացի 1-ին կետում նշված լեզուներից, հաստատվում է ՄՍՀԿ Գլխավոր տնօրենի կողմից՝ շահագրգիռ կողմի խնդրանքով՝ բոլոր շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելուց հետո: Սույն կետի նպատակով «շահագրգիռ կողմ» նշանակում է ՄՍՀԿ ցանկացած Անդամ պետություն, որի պաշտոնական լեզուն կամ լեզուներից մեկը ներառված է, ինչպես նաև Եվրոպական համայնք և ցանկացած այլ միջկառավարական կազմակերպություն, որը կարող է սույն Պայմանագրի կողմ դառնալ, եթե իր պաշտոնական լեզուներից մեկը ներառված է:

Հոդված 33
Ավանդապահը

ՄՍՀԿ Գլխավոր տնօրենը սույն Պայմանագրի ավանդապահն է: